հոգաբարձուներ, եթէ հոգաբարձութեան երեք անդամի պաշտօնավարութեան ժամանակամիջոցը լրացել է։ 25 յուլիսի, թ. 1099։

Դիւանի գրութեամբ յանձնարուեց Ամերիկայի Հայոց թեմի առաջնորդ տ. Արսէն ծ. վարդապետ Վեհունուն պաշտօնապէս յայտնել թեմի հաստատութիւններին և ժողովրդին, որ Մարդուկէսեան նախկին Ղևոնդ վարդապետն իսպառ զրկուած է հոգևոր կոչումից ի Տէր հանգուցեալ Տ. Տ. Մկրտիչ Ա. և Մատթէոս Բ. կաթուղիկոսների կոնդակների համաձայն, և նորա կարգն այլևս չի վերադարձուի։ 25 յուլիսի, թ. 1101։

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան պ. Գէորգ Ռոստոմեան Միրզաբէկեանի անունով Շամախու Հայոց թեմական դպրանոցի շէնքի համար 25000 ռ. նուիրաբերելու և դպրանոցի շէնքի ճեացած ծախքն իւր վրայ վերցնելու համար։ 30 յուլիսի, թ. 1108։

Կոնդակ Ամերիկայի Հայոց առաջնորդ տ. Արսէն ծ. վարդապետ Վեհունու անունով, որով յայտնելով, որ Պօղոս վարդապետ Գաֆթանեանը զրկուած է հոգևոր կոչումից անվայել և խառնակիչ բնաւորութեան պատճառով, յանձնարարուեց յայտնել այդ մասին թեմի բոլոր հոգաբարձական մարմիններին։ 30 յուլիսի, թ. 1109։

Մակադրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի լուսարարապետ տ. Ղևոնդ եպիսկոպոսին շնորհակալութեամբ ստանալ տ. Անանիա արքեպիսկոպոսից ներկայացրած եկեղեցական զգեստները ըստ ցուցակի և պահել Մայր Տաճարում, մուծելով ցուցակի մէջ։ 30 յուլիսի, թ. 1117։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Կոնդակ Բեսսարաբիայի թեմի Սիմֆերոպոլ քաղաքի Երուանդ քահանայ Նալբանդեանի անունով, որով թեմի

առաջնորդի գրաւոր միջնորդութեան համաձայն, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 8 յուլիսի, թ. 1002։

Կոնդակ նոյն թեմի Նոր-Նախիջևան քաղաքի Խաչատուր քահանայ Տէր-Բաղդասարեանի անունով, որին նոյնպիսի քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 8 յուլիսի, թ. 1003։

Կոնդակ նոյն թեմի Տագանրոգ քաղաքի Յովհաննէս քահանայ Օքսենտեանի անունով, որին նոյնպիսի լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 8 յուլիսի, թ. 1004։

Կոնդակ նոյն թեմի Խարասուբազարի Աստուածատուր քահանայ Մեղնիկեանի անունով, որին նոյնպիսի քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 8 յուլիսի, թ. 1005։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

Սինօդը՝ զննելով Նուշու թեմական դպրոցի 75-ամեայ յոբելեանի հանգանակութեան մատեանը, որով մուտք է եղել նուէրներ յօգուտ դպրոցի ընդամենը 352,216 ռ. 62 կոպ. գտաւ, որ մատեանը վարած է կանոնաւոր, ուստի և որոշեց կարճել Սինօդում այդ մասին կազմած գործը։ 18 յունիսի, թ, 293։

Սինօդը՝ քննութեան առնելով Տփխիսի Թանդոյեան եկեղեցու նախկին երեցփոխ Խաչատուր Տէր-Մարգարեանի մեղադրական գործը, որոշեց. Խ. Տէր-Մարգարեանին Վրաստանի կոնսիստորիայի եզրակացութեան համաձայն, յանձնել մարմնաւոր իշխանութեան դատին մի շարք իւրացումներ և դրամական զեղծումներ անելու համար, միաժամանակ 6138 ռուբ. գումարի քաղաքացիական պահանջ անելով նրանից։ 18 յունիսի, թ. 298։

Սինօդը՝ ի նկատի ունենալով, որ հանգ. կտակարար